

րուն նայելով՝ այս շէնքը Խաչակրաց ժամանակ Temp-
lum Dominiի Մկրտութեան մատուռ մը եղած է: Մը-
կրտութեան զեղեցիկ աւազանն ալ՝ որ կեդրոնը պէտք
է հաստատուած ըլլար՝ քանի մը քայլ հեռու, կը
տեսնուի դէպի հարաւ (Bar. gd. էջ 134):

8. Ս. Կոյսի ընծայման եկեղեցի. — Աւանդաբար
կը պատմուի թէ Յուստինիանոս կայսրը՝ Տաճարին
հարթավայրին հարաւ-արեւելքը երեք նաւով մեծ ե-
կեղեցի մը շինեց, որուն երկու կողմերը կրկնայարկ
էին: Ս. Աստուածածնի նուիրուած այս եկեղեցին ու-
նէր դմբէթ մը: Այն տարին որ Արաբները Երուսա-
ղէմը գրաւեցին, Սոփրոնիոս Ս. ծննդեան իր նշանաւոր
քարոզը այստեղ խօսեցաւ: 808ին, Commemoratoriumի
հեղինակը մեզ կ'իմացնէ թէ «Յուստինիանոսէ շին-
ուած Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ կը ծառա-
յէին 12 քահանաներ և կղերիկոսներ»: Բայց Հարուն
էր — Ռաշիտի մահէն յետոյ կամ երկրաշարժէն և կամ
հրդեհէն քանդուած է եկեղեցին եւ արաբները անոր
նիւթերը ուրիշ շէնքերու գործածեցին: Խաչակիրները
նոյն տեղւոյն վրայ շինեցին Ս. Կոյսի ընծայման եկե-
ղեցին (Bar. gd. էջ 139, Հան. 235-236):

9. Ուրբան Քրիսոստի. — Ճամբի էլ Ազսայի ձախ
կողմը՝ պարիսպին հարաւային կողմին կից կը գտնուին
հինգ կանգուն հեռաւորութեամբ իրարու մօտ, մեծու-
թեամբ և բարձրութեամբ իրարու հաւասար քարաշէն
երկու գմբէթներ՝ որ դիւրաւ կ'երևին Գեթսեմանի կամ
Յովսափատ տանող ճանապարհէն:

Այս գմբէթներուն ներքև տեղ մը կայ տունի ձե-
ւով, մէկ դուռով և շատ խոր. 26 աստիճանով կա-